

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/1

7 մայիսի 2013թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ « ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 16.04.2013թ-ի նիստում քննության է առնվել «Էդուկար» ՍՊԸ գրությամբ բերված բողոքը « ԿԱ ՊԵԿ ՕՎԿ 03.04.2013թ. թիվ 1421989 վարչական ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերագրյալ վարչական ակտը թողնվել է անփոփոխ:

«Էդուկար» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) բողոքում մասնավորապես նշված է.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ հարկ վճարողի կողմից սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 4-ով սահմանված կարգի խախտման՝ անփաստաթուղթ արտադրանքի, ապրանքների (այսուհետ՝ ապրանքների) տեղափոխման կամ առաքման կամ առաքվող կամ տեղափոխվող ապրանքն ուղեկցող փաստաթուղթը սահմանված կարգով չգրանցելու դեպքում խախտման հիմք հանդիսացող գործարքի կամ գործողության մասով գանձվում է տուգանք անփաստաթուղթ ապրանքների կամ չգրանցված ուղեկցող փաստաթղթով ապրանքների գնի (արժեքի) 50 տոկոսի չափով:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի հավելված 4-ի (այսուհետ նաև՝ հավելված 4) 1-ին կետի համաձայն՝ սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքում առաքվող կամ տեղափոխվող՝ շարժական, նյութական գույք հանդիսացող արտադրանքի, ապրանքների (այսուհետ՝ ապրանքներ) փաստաթղթավորման և ուղեկցող փաստաթղթերի գրանցման (հաշվառման) կարգը: Սույն կարգով սահմանված առաքվող կամ տեղափոխվող ապրանքների գրանցման (հաշվառման) գրքեր վարելու վերաբերյալ դրույթները չեն տարածվում «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված շրջանառության հարկ վճարող հանդիսացող անձանց վրա:

Պետական մարմնի կողմից Ընկերությանը տրամադրվել էր Առաքման գիրք սեփականության իրավունքով Ընկերությանը պատկանող ԳԱԶ-2705-222 մակնիշի տրանսպորտային միջոցի տվյալներով, որը ներկայումս չի վարվում, քանի որ 2013 թ-ից Ընկերությունը հանդիսանում է շրջանառության հարկով հարկվող տնտեսվարող սուբյեկտ: Հետևաբար Ընկերության վրա այլևս չեն տարածվում հավելված 4-ով սահմանված առաքվող կամ տեղափոխվող ապրանքների գրանցման (հաշվառման) գրքեր վարելու վերաբերյալ դրույթները:

Հավելված 4-ի համաձայն, ուղեկցող փաստաթուղթ է համարվում առաքվող կամ տեղափոխվող ապրանքն ուղեկցող՝ սույն կարգին համապատասխանող հաշվարկային փաստաթուղթ, որն ավելացված արժեքի հարկ վճարող չհամարվողների համար սահմանվում է մատակարարի կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը՝ հաշիվ ապրանքագիրը, իսկ օրենքով սահմանված դեպքերում կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկներով կատարված ձեռքբերումների դեպքում՝ հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոնները («Հավելված 4-ի 2-րդ կետի 5-րդ պարբերություն, 3-րդ կետի 2-րդ ենթակետ): Այսինքն, օրենսդիրը սահմանելով առևտրային գործունեության որոշակի կարգ և պայմաններ, միաժամանակ սահմանել է նաև դրանց նկատմամբ այլընտրանքային պայմաններ, որոնք գործում են դրանց պահանջներին համապատասխանող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ: Տվյալ դեպքում Ընկերությանը, որպես ԱԱՀ չվճարող տնտեսվարող սուբյեկտի, չի կարող ողջամիտ պահանջ առաջադրվել բացի հաշիվ-ապրանքագրից այլ ուղեկցող փաստաթղթեր տրամադրելու և հաշվառելու վերաբերյալ, այնինչ Հավելված 4-ի՝ իրեն վերաբերող դրույթը տառացիորեն պահպանվում և կիրառվում է Ընկերության կողմից:

Ընկերությունը հարկ է համարում նաև նշել, որ իր կողմից իրականացված առևտրային գործունեության մեջ առկա չեն ապրանքների մատակարարման կամ առաքման տարրեր, քանի որ ապրանքները գնորդների կողմից ձեռք են բերվում անմիջականորեն տրանսպորտային միջոցից՝ հաշիվ-ապրանքագիր կնքելու միջոցով, որում նշված են տրանսպորտային միջոցի՝ Ընկերության վաճառքի կետի տվյալները:

Վերոնշյալ պատճառաբանությամբ հաստատվում է, որ Ընկերության կողմից պահպանվել են օրենսդրի կողմից սահմանված կարգի՝ իրեն վերաբերող պայմանները, Ընկերությունն իր գործունեությունն իրականացրել է Օրենքի պահանջին համապատասխան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթներով Ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել 03.04.2013թ-ին կազմված թիվ 1421989 վարչական ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի և ՕՀՎ աշխատակիցների ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 14-րդ բաժնի աշխատակիցների կողմից 03.04.2013թ-ին կազմվել է թիվ 1421989 արձանագրությունը, որում մասնավորապես արձանագրվել է.

ս.թ. մարտի 26-ին ժամը 12:30-ի սահմաններում կատարված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Շիրակի մարզ, Արթիկ քաղաքի Անկախության փողոցում արձանագրվել է անփաստաթուղթ ապրանքների առաքում «Էդուկար» ՍՊԸ կողմից: Ընկերությանը պատկանող ԳԱԶ 2705-222 մակնիշի 09 ՕՕ 558 պետ. համարանիշի ավտոմեքենայով վարորդ-առաքիչ Հակոբ Ռտոյանը առաքում էր տնտեսական ապրանքներ և օժանելիք՝ 570.000 դրամ ընդհանուր արժողությամբ: Ապրանքների գներն ընդունվել են երկկողմանի հիմնավորված նույն ապրանքի հաշվարկային փաստաթղթերից:

Սույն խախտումն առաջացնում է պատասխանատվություն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված՝ անփաստաթուղթ ապրանքների վաճառքի գներով արտահայտված ամբողջ գումարի 50%-ի չափով՝ գումարով 285.000 դրամ:

Ելնելով վերոգրյալից ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 14-րդ բաժնի պետը 03.04.2013թ-ին ընդունել է թիվ 1421989 վարչական ակտը, որով ընկերության նկատմամբ կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված տուգանքը՝ խախտման հիմք հանդիսացող անփաստաթուղթ ապրանքների վաճառքի գներով արտահայտված գումարի 50%-ի չափով՝ գումարով 285.000 դրամ:

Հարկ է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ աշխատակիցների կողմից 26.03.2013թ-ին Շիրակի մարզ, ք.Արթիկ, Անկախության փողոցում կատարվել է ԳԱԶ 2705-222 մակնիշի 09 ՕՕ 558 պետ. համարանիշի ավտոմեքենայի (այսուհետ նաև ավտոմեքենա) բեռի գնում, որի արդյունքում կազմվել է թիվ 1421989/1 արձանագրությունը (որը ստորագրել է նաև Հակոբ Ռտոյանը), որով մասնավորապես արձանագրվել է հետևյալը.

գնումից պարզվել է ավտոմեքենայի բեռնախցիկում փաստացի առկա էին 570.000 դրամի տնտեսական ապրանքներ, օժանելիք և հարդարման միջոցներ: Նշված ապրանքները պատկանում էին «Էդուկար» ՍՊԸ-ին: Ավտոմեքենայի վարորդ Հակոբ Ռտոյանը հայտարարեց, որ աշխատում է նույն ընկերությունում և միաժամանակ հանդիսանում է ընկերության մատակարարը, իսկ վերը նշված ավտոմեքենան հանդիսանում է ընկերության պահեստը, որի պատճառով էլ չունի ուղեկցող փաստաթղթեր: Հակոբ Ռտոյանը ներկայացրեց 26.03.2013թ. թիվ 14 և 26.03.2013թ. թիվ 16 հաշիվ-ապրանքագրերը, որոնցով Հակոբ Ռտոյանը ընկերության անունից մատակարարել է համապատասխանաբար 90.300 ապրանքներ «Արսեն և Գոհար» ՍՊԸ-ին և 50.420 դրամի ապրանքներ Ա/Ձ Մայրամիկ Վարդիկյանին: Ավտոմեքենայում և Հակոբ Ռտոյանի մոտ բացակայում էր առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման գիրքը:

Քննարկվող դեպքում ավտոմեքենայի բեռի զննման ընթացքում մեքենայի վարորդ-մատակարարի մոտ առկա են եղել միայն 26.03.2013թ. թիվ 14 և 26.03.2013թ. թիվ 16 հաշիվ-ապրանքագրերը: Ավտոմեքենայում առկա մնացած ապրանքների վերաբերյալ որևէ փաստաթուղթ ՕՀՎ աշխատակիցներին չի ներկայացվել:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ շրջանառության հարկ վճարողների համար <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված դրույթները կիրառելի չեն միայն առաքվող կամ տեղափոխվող ապրանքների ուղեկցող փաստաթղթերի՝ առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքի գրանցման (հաշվառման) գրքում գրանցումներ կատարելու մասով, իսկ անփաստաթուղթ ապրանքների կամ արտադրանքի մասով <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված դրույթները շրջանառության հարկ վճարողների նկատմամբ կիրառելի են:

Ընկերության ներկայացուցիչը նշեց, որ ամտոմեքենայից իրականացվում է թե մանրածախ, թե մեծածախ առևտուր:

Ընկերության ներկայացուցչին ուղղված հարցին, թե ավտոմեքենայում առկա է արդյոք հսկիչ-դրամարկղային մեքենա՝ մանրածախ առևտրի շրջանառությունը ֆիքսելու համար, հնչեց պատասխան, որ ավտոմեքենայում հսկիչ-դրամարկղային մեքենա առկա չէ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Վարչական ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ